

Գիտություն

ՄԱՅԻՍ

№ 5

(376)

2023 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

«ԳԱԱ-ում միջազգային գիտաժողովով նշանավորվեց աշխարհահռչակ գիտնական Յուրի Հովհաննիսյանի 90-ամյակը»



Սույն թվականի ապրիլի 25-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Գերծանր միջուկներ և ատոմներ» միջազգային գիտաժողովը՝ նվիրված աշխարհահռչակ հայազգի գիտնական, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Մենդելեևի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափնեկիր, ՌԴ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննիսյանի 90-ամյակին:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարյանը շնորհավորեց Յուրի Հով-

հաննիսյանի հոբելյանը՝ մաղթելով առողջություն և անսպառ եռանդ: ՀՀ ԳԱԱ նախագահը ողջունեց գիտաժողովի մասնակիցներին. «Այսօր առավել քան արդիական է «Գիտությունը միավորում է ազգերին» կարգախոսը: Հանդիպման վայրը խորհրդանշական է: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան միավորում է բազմաթիվ երկրների գիտնականների: Մենք բարձր ենք գնահատում այն փաստը, որ Յուրի Հովհաննիսյանը մեր ակադեմիայի անդամ է: Հպարտ ենք, որ Յուրի Հովհաննիսյանի անունն է կրում Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ տարրը, և վերջերս նա դարձել է Մենդելեևի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափ-

նեկիր՝ հիմնարար գիտությունների բնագավառում ձեռքբերումների համար:

Գիտությունների ազգային ակադեմիան, Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան, Երևանի պետական համալսարանը, Հայ-Ռուսական համալսարանն ակտիվորեն համագործակցում են Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ: 1992 թվականից ի վեր շուրջ 20 հայ հետազոտողներ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում պատրաստել և պաշտպանել են իրենց առեմախոսությունները»:

ՀՀ ԳԱԱ նախագահը Յուրի Հովհաննիսյանին և գիտաժողովի մասնակիցներին հրավիրեց մասնակցելու 2023 թվականի հոկտեմբերին կայանալիք ՀՀ ԳԱԱ-ի 80-ամյակի տոնակատարությանը:

Յուրի Հովհաննիսյանին շնորհավորեցին Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և գիտաժողովի մասնակիցները:

Յուրի Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց հայաստանյան գործընկերներին գիտաժողովի կազմակերպ-

ման համար: Նա նշեց, որ գերծանր միջուկների ֆիզիկայի ոլորտի գիտնականները տարին մեկ անգամ հանդիպում են՝ քննարկելու արվածն ու նախանշելու ծրագրերը: 2019 թվականին գիտնականները հավաքվել են Տոկիոյում, 2021 թվականին՝ Դուբնայում, 2022 թվականին՝ Սանկտ Պետերբուրգում: 2023 թվականին այդ հանդիպումն անցկացվում է Երևանում:

Յուրի Հովհաննիսյանը ներկայացրեց իր բազմամյա գիտական գործունեության արդյունքները՝ անդրադառնալով միջուկային ֆիզիկայի բնագավառի մարտահրավերներին ու գերծանր տարրերի սինթեզի պատմությանը:

Գիտաժողովի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ում անցկացվում է «Մեծ գիտություն» լուսանկարչական ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի բացահայտումներն ու ձեռքբերումները:

Հոբելյանական գիտաժողովին մասնակցում են առաջատար գիտնականներ ԱՄՆ-ի Նոտր Դամի համալսարանից, Շվեյցարիայի Փոլ Շերրերի ինստիտուտից, Իսրայելի Թել Ավիվի համալսարանից, Ռուսաստանի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտից, Լեհաստանի միջուկային հետազոտությունների միջազգային կենտրոնից: Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև ապրիլի 29-ը ներառյալ:

«Գերծանր միջուկներ և ատոմներ» միջազգային գիտաժողովը կազմակերպել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը և Տեսական և կիրառական ֆիզիկայի միջազգային միությունը (IUPAP):

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

